

**«Լիազոր մարմնի և ընդերքօգտագործման
իրավունքի տրամադրման համար հայտարարված
մրցույթում հաղթող ճանաչված անձի միջև կնքվող
Նախնական պայմանագրի օրինակելի ձևը
սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման
Նախագիծ**

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____2017թ.№ _____Ն

**ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ
ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱԳՎԱԾ ԱՆԶԻ ՄԻՋԵ ԿՆՔՎՈՂ
ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի
15-րդ հոդվածի 2-րդ մասի 14.2-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության
կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել լիազոր մարմնի և ընդերքօգտագործման իրավունքի
տրամադրման համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված
անձի միջև կնքվող նախնական պայմանագրի օրինակելի ձևը՝
համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման
օրվան հաջորդող 10-րդ օրը:

Հավելված

ՀՀ կառավարության 2017 թվականի

_____ -ի N ____ - Ն որոշման

Ն Ա Խ Ն Ա Կ Ա Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ն

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՆՁԻ ՄԻՋԵՎ ԿՆՔ-
ՎՈՂ

(օրինակելի ձև)

քաղ. երևան

_____ 20 թ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 46-րդ կետով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և 20.2 հոդվածի 5-րդ մասով Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը՝ ի դեմս նախարար _____-ի, ով հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, իր լիազորությունների սահմաններում (այսուհետ՝ լիազոր մարմին) մի կողմից, և _____ ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն), ի դեմս _____, ով գործում է _____ հիման վրա, մյուս կողմից, հաշվի առնելով, որ ընկերությունը հաղթող է ճանաչվել ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար հայտարարված 20__ թվականի _____-ի __-ին հայտարարված մրցույթում, կնքեցին սույն նախնական պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան է

Ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի ձեռքբերման համար ներկայացվող դիմումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը և երկրաբանական ուսումնասիրության նյութերը փորձաքննության ներկայացնելու ժամկետների սահմանումը:

2. Կողմերը սահմանում են հետևյալ ժամկետները՝

- 1) ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի ձեռքբերման համար ներկայացվող դիմումի համար՝ __30__ օրացուցային օր.
- 2) շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի համար՝ __30__ օրացուցային օր.
- 3) երկրաբանական ուսումնասիրության նյութերը փորձաքննության ներկայացնելու համար՝ __60__ օրացուցային օր:

3.Ծանուցում

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծանուցումները, հաղորդումների կատարումը համարվում է պատշաճ, եթե կատարված է գրավոր և տրված է առձեռն, կամ ուղարկված է պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստով կամ կատարված է փոխանցում ֆաքսի միջոցով կողմի ստորև նշված հասցեով կամ այդ նպատակով կողմի նշած մեկ այլ հասցեով, ընդ որում յուրաքանչյուր դեպքում պետք է առկա լինի գրավոր ստացական, որը կարող է փոխանցվել էլեկտրոնային փոստի կամ ֆաքսի միջոցով:

4.Անհաղթահարելի ուժի, ինչպես նաև կողմերի գործունեության հետ չկապված դեպքեր

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, փոթորիկների կամ այլ բնական աղետների, ինչպես նաև պայթյունների, պատերազմի, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմի, անկարգությունների, ապստամբության, ազգայնացման և այլ դեպքեր, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

5.Վեճերի լուծումը

Պայմանագրի կատարման ընթացքում կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է դատական կարգով:

6.Այլ դրույթներ

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորագրելու օրվանից և գործում է մինչև Պայմանագրի 2-րդ կետով սահմանված ժամկետների ավարտը:

6.2 Սույն պայմանագիրը կազմված է 2 օրինակից՝ հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7.Կողմերի վավերապայմանները

Լիազոր մարմին _____

(գտնվելու վայրը)

(հեռախոսահամարները, կապի այլ միջոցները, հաշվարկային հաշիվ)

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ _____

(գտնվելու վայրը, հարկային կոդը)

(հեռախոսահամարները, կապի այլ միջոցները, հաշվարկային հաշիվ)

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԱՆՈՒՆԻՑ

(անունը, ազգանունը,
պաշտոնը)

(ստորագրությունը)

Կ.Տ.

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

(անունը, ազգանունը, պաշտոնը)

(ստորագրությունը)

Կ.Տ.

(այն դեպքում, երբ ընկերությունը կնիք
չունի, այդ մասին հայտարարվում է՝
ձեռագրով նշելով «Ընկերությունը կնիք
չունի», և ստորագրվում Պայմանագիրը
ստորագրողի կողմից)